# ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ ԵՎ ԴԵՎԸ

Սասունցի Դավիթը մենամարտում էր m գլխանի դևի հետ: Նա իր հուժկու մի հարվածով կտրում էր դևի n հատ գլուխ: Բայց նրա յուրաքանչյուր հարվածից հետո դևի մոտ վերականգնվում էր k հատ գլուխ:

Ձեր խնդիրն է գրել ծրագիր, որը տրված n, m և k բնական թվերի համար կպարզի ամենաքիչը քանի հարված է անհրաժեշտ Սասունցի Դավթին, որպեսզի նա կտրի դևի բոլոր գլուխները: Եթե Սասունցի Դավթին չհաջողվի դա անել, ապա Ձեր ծրագիրը պետք է արտածի NO հաղորդագրությունը:

**Մուտքային տվյալներ.**

Մուտքի միակ տողում տրված են n, m և k բնական թվերը, որոնք չեն գերազանցում $10^9$-ը:

**Ելքային տվյալներ.**

Ելքում պետք է արտածել խնդրի պատասխանը:

**Օրինակներ.**

| N | stdin | stdout |
|---|---|---|
| 1 | 3 6 2 | 4 |
| 2 | 5 10 6 | NO |